ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 հուլիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

97
(2763)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ՓՆՏՐՈՒՄ Է ՄԵՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՆ

Հայաստանի բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը ArmLur.am-ի հրապարակումից հետո մեր գաղտնի աղբյուրների որոնմամբ է զբաղված, անգամ մտադիր է դիմել իրավապահներին՝ գտնելու լրագրողի իրազեկ աղբյուրներին:

Հիշեցնենք, որ հուլիսի 3-ին՝ ժամը 10:06-ին, ArmLur.am-ը հրապարակեց մի տեղեկություն, համաձայն որի՝ ԲԴԽ-ն 3 դատավորների մասով կայացրել է որոշումներ: «Մասնավորապես, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ քիչ անց ԲԴԽ-ն կիրապարակի, որ դադարեցվում են դատավորներ Արտակ Բարսեղյանի, Աստղիկ Խառատյանի եւ Տիգրան Պետրոսյանի լիազորությունները»,- գրել էր ArmLur.am-ը:

Այնուհետեւ՝ մոտավորապես մեկուկես ժամ հետո՝ ժամը 11:00-11:30-ի միջակայքում արդեն պաշտոնապես ԲԴԽ-ն հայտնեց իր որոշման մասին, որը ուղիղ հաստատեց ArmLur.am-ի աղբյուրների հայտնած տեղեկությունները: Այդ դատավորների, ինչպես նաեւ Դավիթ Հարությունյանի լիազորությունները դադարեցվեցին: Դատավոր Սամվել Թադեւոսյանն ինքը գրեց իր ազատման դիմումը եւ հեռացավ:

Իսկ մինչ այդ էլ՝ հուլիսի 1-ին, գրել էինք, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամները կիրակի օրը հավաքել են՝ որոշելու 5 դատավորների ճակատագիրը, քանի որ երկուշաբթի օրը՝ հուլիսի 3-ին, ԲԴԽ-ն պիտի հրապարակի 4 (մեկն արդեն հրաժարվել էր) դատավորների վերաբերյալ որոշումը:

Քանի որ «Ժողովուրդ» օրաթերթը եւ ArmLur.am-ը համակ ուշադրությամբ հետեւել են ԲԴԽ անդամների շարժին եւ գործունեությանը ու անգամ ներքին խոհանոցին առնչվող տեղեկություններ հրապարակել, Կարեն Անդրեասյանը ԲԴԽ անդամների մոտ մտահոգություն է հայտնել, թե «Ժողովուրդ» օրաթերթը ԲԴԽ ներսի ինֆորմացիային տիրապետում է, եւ պետք է դիմել իրավապահներին՝ լրագրողի աղբյուրին գտնելու, պատժելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հուլիսի 3-ի վճռական նիստից առաջ քննարկում է եղել, որի ժամանակ ԲԴԽ անդամներից միայն Կարեն Անդրեասյանի մոտ է հեռախոս եղել: Երբ 10:06-ին հրապարակվել է մեր նյութը, Կարեն Անդրեասյանը բարձրաձայն կարդացել է մեր հրապարակումը եւ ասել. «Որտեղի՞ց «Ժողովուրդ» օարթերթին այս տեղեկությունը. պետք է պարզել, ներսից ինֆորմացիաներ են դուրս հանում, կամ սարքեր կան էստեղ դրված լրագրողների կողմից»: Ապա հայտնել է, թե պետք է դիմել իրավապահներին՝ աղբյուրները գտնելու համար: Սպասում ենք նոր հարձակումների եւ գաղտնալսումների:

«Հայաստան» խմբակցության պատգամավոր, իշխանությունների «սրտի ընդդիմադիր» Արմեն Գեւորգյանն օրերս անհարմար եւ տհաճ իրավիճակում է հայտնվել: Ինչպես հայտնի է, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած խորհրդարանական պատվիրակությունը հուլիսի 3-6-ը գործուղվել էր Լեհաստան: Պատվիրակության կազմում են եղել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորներ Արուսյակ Ջուլհակյանը եւ Արման Եղոյանը: Պատվիրակության կազմում ընդդիմադիրներից ընդգրկված է եղել միայն «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանը, որը, ինչպես հայտնի է, ՔՊ-ականների սիրելի ընդդիմադիրներից է. վերջինս, կարծես, ընդամենը թվացյալ ընդդիմադիր լինի, մշտապես խուսափում է սուր քննադատել իշխանություններին, թերեւս սրա համար էլ դարձել է ՔՊ-ականների սիրելի ընդդիմադիրը, բավականին հաճախ էլ գործուղումների է մեկնում իշխող ֆրակցիայի պատգամավորների հետ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հուլիսի 3-ին օդանավակայանում պատգամավոր Գեւորգյանին չեն թողել դուրս գալ երկրից: Այսինքն՝ ԱԺ նախագահը կազմել է պատվիրակություն, ստորագրել փաստաթղթեր, պետբյուջեից վճարվել են ճանապարհածախսի, ներկայացուցչական ծախսերի, օրապահիկի եւ գիշերավարձի համար, սակայն ուժային կառույցները թույլ չեն տվել Գեւորգյանին դուրս գալ երկրից: ԱԺ նախագահի խոսնակ Ծովինար Խաչատրյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց, որ ընդդիմադիր պատգամավորը պատվիրակության հետ չի մեկնել Լեհաստան: «Արմեն Գեւորգյանը պետք է մեզ հետ Լեհաստան գար, սակայն վերջին պահին օդանավակայանում նրա ելքը փակ էր, այդ պատճառով չի կարողացել մեկնել Լեհաստան, բայց մինչ այդ մեզ հավաստիացրել էին, որ որեւէ խնդիր չի լինելու, դրա համար նա ընդգրկվել էր պատվիրակության կազմում »,-ասաց Խաչատրյանը: ԱԺ նախագահի խոսնակից հետաքրքվեցինք նաեւ՝ արդյոք ընդդիմադիր այլ պատգամավորների առաջարկել են մեկնել Լեհաստան, Խաչատրյանը պարզաբանեց. «Որեւէ մեկին չի առաջարկվել, որ նրանք էլ հրաժարվել են»:

ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Սահակյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի գործով դատական նիստերը չեն կայանում: Բանն այն է, որ դատարանը առաջին նիստը նշանակել է մայիսի 16-ին, սակայն գործով անցնող անձանց պաշտպանները առաջին նիստի օրը չեն ներկայացել դատարան՝նշելով, որ չեն կարող ներկայանալ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով: Արդյունքում Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Տիգրան Ոսկանյանը հերթական նիստն է նշանակել հունիսի 26-ին, բայց էլի նիստը չի կայացել: Դատարան է ստացվել մեղադրյալի պաշտպանների դիմումն առ այն, որ մասնակցելու են Փաստաբանների պալատի կողմից անցկացվող սեմինարին եւ միաժամանակ նաեւ իրականացվող ակցիային: Ստացվում է, որ դատարանը նիստեր է հրավիրում, բայց դրանք չեն կայանում: Հերթական նիստը հրավիրվել է հուլիսի 26-ին: Ի դեպ, չնայած դատապաշտպանները չեն գալիս, բայց մեղադրյալ պատգամավոր Միհր Սահակյանը բոլոր նշանակված նիստերին անձամբ նրկայացել է դատարան: Հիշեցնենք, որ ս.թ. մարտի 31-ին միջադեպ էր տեղի ունեցել ԱԺ պետահրավական հարցերի հանձնաժողովի փակ նիստի ժամանակ: Քննչական կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ Միհր Սահակյանը աջ ձեռքում գտնվող ինչ-որ առարկայով մեկ անգամ հարվածել է Վլադիմիր Վարդանյանի ձախ հոնքին, որի հետեւանքով վերջինս վայր է ընկել: Սահակյանը պնդում է, որ բռունցքով է հարվածել՝ պատասխանելով Վարդանյանի ագրեսիային:

Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի ներկայացրած պաշտոնական հայտարարագրի համաձայն՝ նա ունի համատեղ սեփականությամբ երկու բնակարան, որոնք գտնվում են Երեւանում: Անշարժ գույքերից մեկը ձեռք է բերվել 2000 թվականին, մյուսը՝2017, սակայն հայտարարագրում այն ձեռք բերելու ձեւը նշված չէ՝ կանխիկ, թե հիփոթեքով: Բացի այս, նա զ բաժնեմաս ունի մեկ այլ բնակարանից, որը ձեռք է բերվել արդեն 2021 թվականին, եւ կրկին այն ձեռք բերելու տարբերակի մասին տեղեկություններ առկա չեն: 2022 թ. մարտից թաղապետի պաշտոնը զբաղեցրած Ռոման Համբարձումյանը բանկում ավանդ ունի, որը տարեվերջի դրությամբ կազմել է 30 հազար դոլար: Մինչ այդ պաշտոնում նշանակվելը Համբարձումյանն աշխատել է «Հայփոստ»-ում, «Վեոլիա ջուր» ընկերությունում միաժամանակ, նաեւ եղել է Դավթաշեն վարչական շրջանի ավագանու անդամ: Մի քանի աշխատանք համատեղող պաշտոնյան, հայտարարագրի համաձայն, դեռեւս 2017 թվականին 15 հազար դոլարանոց ձեռքի ժամացույց է նվեր ստացել: Ումից, ինչի դիմաց՝ չի մանրամասնել: Եթե սա լիներ նախկինում, ապա Նիկոլ Փաշինյանը կասեր՝ կոռումպացված չինովնիկ, իսկ հիմա լռում է: Հավելենք, որ անցնող տարվա սկզբում նա իր բանկային հաշիվներին ընդհանուր առմամբ մեկ մլն դրամ գումար է ունեցել, սակայն արդեն տարեվերջին այդ գումարները ծախսված են եղել: Թե ինչի վրա է ծախսել, էլի պարզ չէ, քանի որ ծախսերի մասին որեւէ տեղեկություն հայտարարագրում առկա չէ: Իսկ, ահա, որպես տարեվերջին առկա կանխիկ գումար, վարչական շրջանի ղեկավարը հայտարարագրել է 41 հազար դոլար, 4500 եվրո եւ 10 մլն դրամ գումար: Մեկ տարվա ընթացքում նրա եկամուտը կազմել է 8 մլն 433 հազար դրամ, որից 6 մլն դրամը որպես վարչական շրջանի ղեկավարի նրա աշխատավարձն է, իսկ 1 մլն 720 հազար դրամն էլ նա ստացել է Հայփոստից՝թերեւս էլի որպես աշխատավարձի ինչ-որ մաս: Հավելենք, որ Դավիթաշենի վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի տեղակալ Կորյուն Մխիթարյանն այս տարվա հունվարին աղմկահարույց պատմության մեջ էր ընկել: Նրա վրա կրակել էին եւ ոչ թե անձնական խնդիրների պատճառով, այլ քանի որ նա Ռոման Համբարձումյանի տեղակալն է եւ քաղաքացիների հետ հարաբերվել է փողոցային կանոններով:

ԶՐՈՒՅՑ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ԱԼԻԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Չնայած նրան, որ Հայաստանի իշխանություններն ամենաբարձր մակարդակով բազմիցս հայտարարել են, որ Լեռնային Ղարաբաղում այլեւս ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումներ չկան, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը շարունակում է պնդել, թե Արցախում հայկական զինված ուժեր կան տեղակայված, եւ պահանջում է դրանք ամբողջությամբ դուրս բերել Արցախից:

«Եթե Հայաստանն իսկապես շահագրգռված է՝ հասնելու տարածաշրջանում երկար սպասված խաղաղությանը, ապա պետք է զինված ուժերն ամբողջությամբ դուրս բերի Լեռնային Ղարաբաղից»,- հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Պատիվ ունեմ խմբակցության» պատգամավոր Տիգրան Աբրահամյանը նշում է՝ Ադրբեջանի նախագահը հերթական անգամ կեղծ տեղեկատվական ֆոն է ապահովում ռազմական հետագա գործողությունների գնալու համար:

-Ադրբեջանում բնականաբար գիտակցում են եւ իրենք լավագույնս տեղյակ են, որ Հայաստանի զինված ուժերը Արցախից դուրս են բերված, իսկ Արցախում գործող պաշտպանության բանակը ձեւավորված է բացառապես արցախցիների, ասել է թե՝ Արցախի գրանցում ունեցող անձանց հիման վրա եւ ունի ընդամենը մեկ ֆունկցիա՝ ինքնապաշտպանություն: Հաշվի առնելով հանգամանքը, որ Ադրբեջանը փորձում է ամեն կերպ հասնել Արցախի ապառազմականացմանը, այն է՝ Արցախին կենսունակությունից եւ պաշտպանվելու ունակությունից զրկելը, հիմա փորձում է քաղաքական ու տեղեկատվական հիմքեր ստեղծել Արցախում հնարավոր գործողություն սկսելու համար: Չեմ կարծում, որ մասշտաբային գործողություններ են սկսվելու, բայց, ըստ Ադրբեջանի հռետորաբանության, ենթադրվում է որոշակի ռազմական օբյեկտների նկատմամբ հարվածներ: Սրանով պայմանավորված՝ Ադրբեջանը փորձում է իր դիրքորոշումը ձեւավորելիս Արցախի պաշտպանության բանակը ներկայացնել որպես Հայաստանի զինված ուժերի ներկայություն, ինչը չի համապատասխանում իրականությանը: Վստահ է, որ այնտեղ Հայաստանի Հանրապետության զինված ուժեր ներկայացված չեն, եւ Պաշտպանության բանակը կազմված է բացառապես արցախցիներից, բայց իր մոտեցումներն ավելի հնչեղ դարձնելու եւ իր, այսպես ասած, պատերազմական գործողությունները սկսելու հիմքերն ուժեղացնելու տեսանկյունից փորձում է Պաշտպանության բանակի դեմ իր հնարավոր հարվածները ներկայացնել որպես Հայաստանին հնչեցված պահանջի կատարման հետեւանք:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Արցախը գտնվում է շրջափակման մեջ, եւ Արցախում խնդիրներն օր օրի ավելանում են: Դադարեցվել է նաեւ վառելիքի ներկրումը, իսկ պարենային ապրանքներն ու դեղորայքը սպառման եզրին են:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը ասաց, որ Արցախում նույն իրավիճակն է: «Պաշարված, շրջափակված մի կերպ դիմադրում ենք: Պարենային ապրանքների պակասություն կա, ժողովրդական լեզվով ասած՝ մի կերպ «յոլա ենք գնում»: Փորձում ենք ներքին պոտենցյալը օգտագործել, գյուղերից սննդամթերք բերել, որոշ բաներ էլ այս պահին Արցախ է գալիս Կարմիր խաչի եւ ռուս խաղաղապահների միջոցով:

Ինչպես նաեւ Կարմիր խաչի միջոցով որոշ հիվանդներ են տեղափոխվել Հայաստան»-ասաց Բաբայանը:

Հիշեցնենք նաեւ, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Չմիավորման շարժման համակարգող բյուրոյի նախարարական հանդիպման իր ելույթի ժամանակ նշել է, որ չի ընդունի ՄԱԿ-ի Անվտանգության ոլորտում Ադրբեջանի դեմ ուղղված միակողմանի եւ կողմնակալ հայտարարությունները: «Չնայած նրան, որ Հայաստանը ստիպված է ճանաչել Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս, Ադրբեջանի տարածքներում, որտեղ ժամանակավորապես տեղակայված են ռուս խաղաղապահներ, դեռեւս կան հայկական զինված ուժեր»,- ասել է Ալիեւը՝ ընդգծելով, որ եթե Հայաստանը իսկապես շահագրգռված է տարածաշրջանում երկար սպասված խաղաղությամբ, ապա Ղարաբաղում գտնվող նրա զինված ուժերը պետք է ամբողջությամբ դուրս գան տարածաշրջանից:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ: «Ուրիշ ի՞նչ ենք մենք սպասում Ալիեւից. իհարկե, նա այդպես պետք է ասի: Բայց պարզ է, որ իր ասածը չի համապատասխանում իրականությանը: Եթե մեզ փորձում են «խցկել» Ադրբեջանի կազմի մեջ, պարզ է, որ Ալիեւն էլ պետք է օգտվի այդ իրավիճակից. կարող է չօգտվի՞: Այս իրավիճակի լուծումը միայն այն է, որ Հայաստանը Արցախը չճանաչի Ադրբեջանի մաս: Եթե Հայաստանը ճանաչեց Արցախը Ադրբեջանի մաս, մենք կկորցնենք նաեւ Երեւանը»-ասաց Բաբայանը:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՑ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանը երեկ լրագրողների հետ զրույցում անդրադարձել էր Արցախի հարցով բանակցային գործընթացին: Նախկին արտգործնախարարը նաեւ նոր առաջարկով էր հանդես եկել. Նիկոլ Փաշինյանին առաջարկել էր 3 ամիս լռել, իսկ իրեն Արցախի հարցով բանակցություններ վարելու լիազորություն տալ. «Եթե այսօր լիազորություն տրվի ինձ, մի խումբ դիվանագետների, վստահեցնում եմ ձեզ, շատ կարճ ժամանակում՝ երկու-երեք ամսվա ընթացքում, կտրուկ կարելի է իրավիճակում փոփոխություն մտցնել, բայց այդ լիազորությունը պետք է լինի 100 տոկոս. Փաշինյանը երեք ամիս պետք է լռի: Այնքան վնաս, ինչքան վնաս տրվել է հայ ժողովրդին ու Հայաստանին Փաշինյանի խոսելու արդյունքում, այլ բան չի եղել: Փաշինյանի խոսելը մեր գլխին բերել է պատերազմ, այսօր Փաշինյանի շարունակել խոսելը առավել բարդացնում է իրավիճակը»,- հայտարարել էր Օսկանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասայանից հետաքրքրվել է՝ արդյոք պատրաստ է Փաշինյանը լռել, ոչինչ չխոսել ու Վարդան Օսկանյանին Արցախի հարցը լուծելու լիազորություն տալ:

«Անկեղծ ասած, վարչապետի՝ ԱԺ քննիչ հանձնաժողովում ունեցած ելույթը, այնուհետեւ հարցուպատասխանը ցանկացած տեսակի հարցերի հստակ արձագանքն է: Ոչ միայն Վարդան Օսկանյանի, այլ նաեւ դրանից հետո հնչած տարբեր մեկնաբանությունների առումով որեւէ արձագանք այս պահին չենք ուզում ունենալ, քանի որ կարծում ենք, որ վարչապետի այն տեսակետները եւ հայտարարությունները, որոնք հնչեցվել են ԱԺ քննիչ հանձնաժողովում, սպառիչ են, եւ այլ մեկնաբանության կարիք չենք տեսնում»,-արձագանքեց Բաղդասարյանը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԼԱՆՆԵՐԸ

44-օրյա պատերազմից 3 տարի անց, երբ Նիկոլ Փաշինյանը ներկայացավ պատերազմի հանգամանքները ուսումնասիրող քննիչ հանձնաժողով, ուղիղ եթերում խոսեց շատ թեմաների մասին՝ չկաշկանդվելով պետական գաղտնիքի հրապարակումից: Հիմա իշխանական հանձնաժողովի նախագահը պլանավորում է՝ ինչ անել առաջիկայում:

Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն, հանձնաժողովը այս օրերին քննարկում է, թե վարչապետից հետո որ պաշտոնյաներին հերթականությամբ պետք է հրավիրեն հանձնաժողով: Մասնավորապես, քննարկում են հաջորդը քննիչ հանձնաժողով հրավիրել Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանին: Թե ինչպես նա պետք է գա շրջափակված Արցախից, չեն պատկերացնում անգամ ՔՊ-ականները: Այնուհետեւ ԱԺ-ում մտադիր են ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանին, ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին հրավիրել: Ի դեպ, երեկ Դավիթ Տոնոյանը հայտարարել էր, որ միջնորդություն է ներկայացրել դատարան, որպեսզի իրեն թույլ տան գնալ ԱԺ՝ մասնակցելու քննիչ հանձնաժողովի նիստերին:

ՀԵՌԱԽՈՍԱԶԱՆԳ՝ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ

Հայկական կողմի նախաձեռնությամբ Վլադիմիր Պուտինը հեռախոսազրույց է ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Այս մասին ասված է ՌԴ նախագահի պաշտոնական կայքում:

Քննարկվել է Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակը, այդ թվում՝ Լաչինի միջանցքով անարգել տրանսպորտային կապի ապահովման հարցեր:

Ընդգծվել է 2020-2022 թվականներին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ պայմանավորվածությունների ամբողջ փաթեթի հետեւողական իրականացման հիմնարար նշանակությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ռուսաստանի նախագահը հաստատել է ռուսական կողմի պատրաստակամությունը՝ շարունակելու գործնական աջակցություն ցուցաբերել հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագրի զարգացման գործում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել շփումները տարբեր մակարդակներով:

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄ Է ՍԱԱԿԱՇՎԻԼԻԻՆ

«Վրաստանին հետաքրքիր չեն Ուկրաինայի ապագա գործողությունները Վրաստանի դեսպանին Թբիլիսի ուղարկելուց հետո հանրապետության նախկին նախագահ Միխայիլ Սաակաշվիլու շուրջ իրավիճակի պատճառով»,-ասել է կառավարող «Վրացական երազանք - Դեմոկրատական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն (տեղեկացրել է վրացական «Առաջին ալիքը»): Նրա խոսքով՝ երկրի դեսպանը Կիեւում էր եւ շարունակում էր աշխատանքը՝ չնայած Ուկրաինայում հակամարտությանը:

«Այն քայլի համատեքստում, որն արդեն արվել է, հաջորդ քայլերն արդեն հետաքրքիր չեն: Սա է տխուր իրականությունը: Ոչ մի խորհրդակցություն Սաակաշվիլու հարցով սկսել չի կարելի»,- նշել է Կոբախիձեն:

Սաակաշվիլին գաղտնի վերադարձել է հայրենիք 2021թ. աշնան կեսին՝ չնայած իր նկատմամբ մի շարք քրեական գործերի առկայությանը: Արդյունքում Վրաստանի նախկին նախագահը ձերբակալվել է եւ բանտարկվել: Ինքը՝ Սաակաշվիլին, իր կալանավորումն անվանել է քաղաքականացված եւ հացադուլ է հայտարարել: Հետագայում նախկին նախագահի առողջական վիճակը լրջորեն վատացել է, 2022թ. մայիսին նա բանտից տեղափոխվել է մայրաքաղաքի կլինիկա՝զննման համար: Քաղաքական գործչի վիճակի հետ կապված՝ եվրոպական տարբեր երկրներ եւ Ուկրաինան, որի քաղաքացիություն ունի նա, սկսել են պահանջել, որ նրան բուժման տեղափոխեն արտասահման: 2023թ. հուլիսի սկզբին հայտնվեցին կադրեր դատական նիստից, որոնցում Սաակաշվիլին շատ նիհար է:Դրան ի պատասխան՝ Կիեւը կանչել է Վրաստանի դեսպանին եւ պահանջել վերադառնալ Թբիլիսի՝ նորից վրացական կողմին կոչ անելով բուժման համար իրենց հանձնել նախկին նախագահին:

ՀԱՅՑ

ԴԻՄԵԼ ԵՆ ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

Ուկրաինան, Մեծ Բրիտանիան, Կանադան եւ Շվեդիան Իրանի դեմ հայց են ներկայացրել ՄԱԿ Միջազգային դատարան ուկրաինական ուղեւորատար ինքնաթիռի կործանման պատճառով, որը խփվել է 2020թ.՝ Թեհրանի օդանավակայանից դուրս գալիս: Այս մասին նշվել է այդ պետությունների դիվանագիտական գերատեսչությունների համատեղ հայտարարությունում, որը հրապարակվել է Ուկրաինայի ԱԳՆ կայքում:

«Մենք՝ Կանադան, Շվեդիան, Ուկրաինան եւ Միացյալ Թագավորությունը [Մեծ Բրիտանիա եւ Հյուսիսային Իռլանդիա] ներկայացնող նախարարներս, կարեւոր քայլ ենք կատարել մեր համատեղ ջանքերում, որպեսզի ապահովենք Իրանին պատասխանատվության ենթարկելն այն բանի համար, որ «Ուկրաինայի միջազգային ավիաուղիներ» ավիաընկերության PS752 չվերթն անօրինական կերպով խփվել է»,- նշվել է հայտարարությունում:

Փաստաթղթում հիշատակվում է, որ Իրանը չի պատասխանել չորս երկրների՝ 2022թ. դեկտեմբերի 28-ի արբիտրաժ ստեղծելու պահանջներին՝ վեճը լուծելու համար: «Որպես հետեւանք՝ այս շաբաթ Հաագայում մենք համատեղ հայց ենք ներկայացրել ՄԱԿ Միջազգային դատարան՝ դրանով իսկ սկսելով վարույթ Իրանի դեմ՝ կապված 1971թ. քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական ակտերի դեմ պայքարի կոնվենցիան խախտելու հետ»,- նշված է հայտարարությունում:

Դրանում ասվում է, որ «Իրանը, այլ խախտումների թվում, բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել, որպեսզի կանխի PS752 չվերթի օդանավի ոչնչացումը իր զինված ուժերի կողմից», ինչպես նաեւ «չի կարողացել միջազգային չափորոշիչներին համապատասխան լիակատար, թափանցիկ եւ անաչառ նախաքննություն եւ դատավարություն իրականացնել»:

Հայցը ներկայացրած պետությունները պահանջում են, որպեսզի ՄԱԿ Միջազգային դատարանը պարտավորեցնի Իրանին հրապարակայնորեն ընդունել, որ իր գործողությունները հակասել են միջազգային իրավունքին, ներողություն խնդրի զոհվածների ընտանիքներից, միջոցներ ձեռնարկի նման միջադեպերի կանխման համար, իրականացնի դատական հետապնդում խփված ինքնաթիռի գործով կասկածվողների նկատմամբ՝ներառյալ նրանց արտահանձնումը, եւ վճարի այն երկրներին, որոնց քաղաքացիները զոհվել են ուկրաինական ինքնաթիռի միջադեպի ժամանակ, փոխհատուցի զոհվածների եւ նրանց ընտանիքների կրած վնասը:

Հայցը ներկայացնելուց հետո դատարանը կողմերին գրավոր փաստաթղթերի փոխանակման, իսկ հետո՝ բանավոր լսումների համար ժամկետ կնշանակի: Պատասխանողը կարող է նախնական առարկություններ ներկայացնել: ՄԱԿ Միջազգային դատարանի գործերի դիտարկումը սովորաբար մի քանի տարի է տեւում. նշվել է հայտարարությունում:

«Ուկրաինայի միջազգային ավիաուղիների» PS752 չվերթը (Boeing 737-800 ինքնաթիռ) 2020թ. հունվարի 8-ին խփվել էր Թեհրանի օդանավակայանից Կիեւ ուղեւորվելիս: 176 զոհվածների մեջ կային Աֆղանստանի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իրանի, Կանադայի, Ուկրաինայի եւ Շվեդիայի քաղաքացիներ: Հունվարի 11-ին իրանցի զինվորականները հայտարարել են, որ սխալմամբ խփել են ռազմական օբյեկտի կողքով թռչող Boeing-ը՝այն «թշնամական թիրախ» համարելով:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԶԻՆԱԹԱՓԵԼՈՒ, «ՄԻՋԱՆՑՔԸ» ԲԱՑԵԼՈՒ ԿՈՉ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը պահանջում է զինաթափել Արցախի պաշտպանության բանակը եւ բացել «Զանգեզուրի միջանցքը»: Նա իր պահանջները եւ տարածքային հավակնությունները Հայաստանի հանդեպ ներկայացրել է Բաքվում Չմիավորման շարժման համակարգող բյուրոյի նախարարական հանդիպման ժամանակ:

«Հակամարտության ավարտից շատ չանցած՝Ադրբեջանը ներկայացրել է հինգ հիմնական սկզբունք Հայաստանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման համար՝ հիմնված միմյանց ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման վրա: Չնայած Հայաստանը ստիպված էր Ղարաբաղը ճանաչել Ադրբեջանի մաս, Ադրբեջանի տարածքում, որտեղ ժամանակավորապես տեղակայված են ռուս խաղաղապահները, դեռեւս գտնվում են հայկական զինված ուժերի մնացորդները»,- ասել է Ալիեւը (տեղեկացրել են ադրբեջանական ԶԼՄ-ները):

«Հայ զինվորականները եւ ռազմականամերձ կազմավորումները տեղերում պետք է զինաթափվեն»,- ասել է Իլհամ Ալիեւը:

Նա նաեւ հայտարարել է, որ «Հայաստանը նաեւ խոչընդոտում է Զանգեզուրի միջանցքի բացմանը, որն Ադրբեջանի հիմնական մասը կկապի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության հետ: Դա նրա պարտականությունն է, որը բխում է մոտ երեք տարի առաջ նրա ստորագրած կապիտուլյացիայի ակտից»:

ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽՎԵՑԻՆ

Երեկ ԱՀ առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից 15 բուժառու ուղեկցողների հետ միասին, «Կարմիր խաչի» միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ, տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախատեսվում է նաեւ ԿԽՄԿ մեքենաներով Արցախ վերադարձնել 17 բուժառուների ուղեկցողների հետ միասին, որոնք ժամանակին պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել էին ՀՀ՝ բուժում ստանալու:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ

Երեւանի քաղաքապետարանի կողմից նոր կարգով կազմակերպվող քաղաքացիների ընդունելությանը մասնակցելու համար բնակիչները գրավոր դիմումը կարող են ներկայացնել ինչպես առձեռն, այնպես էլ առցանց: «Ժողովուրդ» օրաթերթին այս մասին տեղեկացրին Երեւանի քաղաքապետարանից: Ըստ աղբյուրի՝դիմումն առցանց ներկայացնելու համար համար անհրաժեշտ է մուտք գործել քաղաքապետարանի պաշտոնական՝ www.yerevan.am կայք, սեղմել «Արագ դիմում» պատուհանը եւ պարտադիր հայատառ լրացնել բոլոր դաշտերը՝կցելով նաեւ փաստաթղթերը: «Ուղարկելով դիմումը՝ էլեկտրոնային փոստին կստանաք 16 նիշանի հսկիչ համար, որով «Մեկ պատուհան» հարթակում կկարողանաք հետեւել դիմումի ընթացքին»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԴԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՄԱՆՐԱԴՐԱՄ ՉԴԱՌՆԱԼ

Երեկ դատավորների միության նախագահ Ալեքսանդր Ազարյանը հայտարարություն էր տարածել, որում ասվում էր. «Հարգելի՛ դատավորներ, իմ կողմից ավելի վաղ արված հայտարարություններով անդրադարձ է կատարվել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի՝ մինչեւ սույն թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածի անօրինական գործողություններին՝ 20-ից ավելի դատավորների դաշտոնավարման դադարեցում, սեփական շահերին վերաբերող օրենսդրական փոփոխությունների ընդունում, ԲԴԽ դատավոր անդամի ընտրություններին միջամտություն եւ այլն:

2023 թվականի ապրիլից հուլիսի 3-ը Բարձրագույն դատական խորհրդի նախագահը ֆինանսական անքակտելի կապերով փոխկապակցված ընկերոջ՝ Գրիգոր Մինասյանի հետ համակատարմամբ, այլ անձանց ներգրավմամբ ու օժանդակությամբ շարունակել են սահմանադրական կարգի, դատական իշխանության դեմ ոտնձգությունները, որպիսի գործողությունները դրսեւորվել են հետեւյալում.

այսպես,

Կ.Անդրեասյանը, շարունակել է արդարադատության նախարար Գ. Մինասյանի հետ տնօրինել ֆինանսական միջոցներ եւ գույք, միջազգային համընդհանուր ու հատկապես ներպետական օրենսդրության արգելքի պայմաններում առանձնակի հանդգնությամբ ու հրապարակային կիսելով տնտեսական գործունեության շահույթը, որը գերազանցել է վերջիններիս պետական աշխատավարձի առնվազն կրկնապատիկը, մեկը մյուսի գործողությունները լրացնելով՝ ձեռնամուխ են եղել նախկինում եւ տվյալ ժամանակահատվածում տարբեր եղանակներով դատավորների անկախության, անփոփոխելիության, խոսքի ազատության սահմանադրական երաշխիքները, սկզբունքները սահմանափակող օրենսդրական փոփոխությունների ընդունմանը, մի շարք դատավորների նկատմամբ ընտրողական եւ կամայական կարգապահական վարույթների հարուցմանը, պատասխանատվության ենթարկելուն ու իրավաբանական համայնքում հեղինակություն վայելող դատավորների լիազորությունները դադարեցնելուն:

Մասնավորապես՝ ապրիլին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին վարույթներ են հարուցվել դատավորներ Ա. Խառատյանի, Տ. Պետրոսյանի, Ա. Բարսեղյանի եւ Ս. Թադեւոսյանի նկատմամբ՝ ՄԻԵԴ որոշումների արդյունքում ենթադրյալ խախտումների հիմքով, այն պայմաններում, երբ նշված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ եղել է Կարեն Անդրեասյանի կողմից «Եվրոպայի իմաստություն» որակված Վենետիկի հանձնաժողովի՝ իր իսկ կողմից հայցած, սակայն խիստ բացասական արձագանքի արժանացած կարծիքը՝ պետությանը՝ ՄԻԵԴ վճիռների տեսքով մարտահրավերների առջեւ կանգնեցնելու անխուսափելի վտանգի մասին:

Հարկ է նկատել, որ դատավորների նկատմամբ խտրական վերաբերմունքի փաստն արձանագրվել է նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից միայն դատավորների լիազորությունները դադարեցնելու հաջորդ օրը՝ հուլիսի 4-ին:

Հուլիսի 3-ին դադարեցվել են նաեւ դատական իշխանությանը վերաբերող հարցերի մասին արտահայտվելու իրավասությունը պարբերաբար իրացրած դատավոր Դավիթ Հարությունյանի լիազորությունները: ԲԴԽ-ն, առանց դատավորի կարծիքը հաշվի առնելու, նախարար Մինասյանի միջնորդության հիման վրա՝ որոշում է կայացրել: Դատավորին զրկել են վերագրվող խախտման ու մյուս հարցերի վերաբերյալ հրապարակային դիրքորոշում հայտնելու հնարավորությունից:

Հարկ է նշել, որ վարույթի քննությունն իրականացվել է ԲԴԽ ոչ օրինական կազմով՝ 4 ոչ դատավոր անդամի եւ 2 դատավոր անդամի մասնակցությամբ, Կարեն Անդրեասյանի սահմանած ու ընթացքում փոփոխվող կամայական կանոններով:

Կարեն Անդրեասյանը, ամբողջ վարույթի ընթացքում դատավորին զրկելով վերագրվող խախտման վերաբերյալ դիրքորոշում հայտնելու հնարավորությունից, ԲԴԽ անդամների թողտվությամբ անհարգալից վերաբերմունք է դրսեւորել նաեւ վերջիններիս նկատմամբ՝ նրանց բնորոշելով որպես ոչ ինքնուրույն, հանելով նրանց տված հարցերը եւ առաջարկությունները: Արդյունքում ԲԴԽ նախագահն ու մյուսները հավանաբար հիմք են ընդունել դատավորի՝ դատական համակարգին վերաբերող մտահոգությունների կապակցությամբ բազմիցս գրավոր եւ հրապարակային արտահայտված դիրքորոշումների վերաբերյալ բացառապես ֆինանսական գործընկերոջ՝ վարույթ հարուցելու որոշմամբ արված մեկնաբանությունը: Դատավորների նկատմամբ վրեժխնդրությունն իրացնելուց զատ, Կարեն Անդրեասյանը հուլիսի 3-ին հանդուգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք է դրսեւորել լրագրողների մասնագիտական գործունեության նկատմամբ. օրենքի ուժով դռնբաց դատական նիստում ակտերը հրապարակելու պարտականության ընթացքում դատական նիստերի դահլիճը պարտադրանքով փորձել են լցնել ԲԴԽ աշխատակազմի, ԲԴԽ անդամների օգնականներով եւ դեպարտամենտի աշխատակիցներով, իսկ դեպի նիստերի դահլիճ տանող ճանապարհին արգելափակել են կարգադրիչների երկշարք պատնեշով, լեփ-լեցուն դահլիճի կեղծ պատրվակով արգելել են ներկա բոլոր լրատվամիջոցների եւ դատավորի ներկայացուցիչներից մեկի մուտքը դատական նիստերի դահլիճ:

Ամփոփելով՝ հարկ եմ համարում կրկին ընդգծել, որ Կ. Անդրեասյանը բարձրագույն դատական խորհրդի ժամանակավոր անդամ է, խորհրդի գործունեության բացասական հետեւանքները զգացնել են տալու տարիներ շարունակ, եւ այդ հետեւանքների առաջին կրողները դատավորներն են ու հանրությունը, ուստի այսօր (երեկ-խմբ.)՝ Սահմանադրության օրը, կոչ եմ անում դատավորներին գործել բացառապես երկրի գլխավոր օրենքին համահունչ եւ կասկածելի ու հանցավոր արկածախնդիր, ոչ պրոֆեսիոնալ մարդկանց ձեռքին մանրադրամ չդառնալ»:

ԴԻՄՈՒՄ

ՆԱԽԿԻՆ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՐԴԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել Սուրիկ Խաչատրյանի որդու՝ Տրդատ Խաչատրյանի եւ փաստաբան Վահագն Քեշիշյանի դիմումը, որտեղ նրանք նախաքննական մարմնից պահանջում են Վահագն Քեշիշյանին ներգրավել որպես եղբոր՝ Տիգրան Խաչատրյանի պաշտպան: Նախաքննական մարմինը փաստացի հրաժարվել է պաշտպան ներգրավել, ուստի անձը զրկված է անհրաժեշտ պաշտպանությունից, ինչի արդյունքում էլ խախտվում է նրա՝ արդար դատաքննության իրավունքը:

Հիշեցնենք, որ Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի (Լիսկա) որդու՝ Տիգրան Խաչատրյանի նկատմամբ դատարանը որոշում էր կայացրել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Ինչպես հայտնել էր ՀՀ քննչական կոմիտեի մամուլի խոսնակ Գոռ Աբրահամյանը, դատարանը բավարարել էր ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունից ներկայացված միջնորդությունը: Բանն այն է, որ Տիգրան Խաչատրյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցված հրազենի ապօրինի շրջանառության եւ խուլիգանության համար, որը կատարվել է զենքի գործադրմամբ:

Ըստ նախաքննությամբ ստացված փաստական տվյալների՝ Խաչատրյանը հունիսի 19-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, իրեն պատկանող Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենայով երկու մտերիմների հետ գնացել է ավտոտեխսպասարկման կետ, որտեղ պարզաբանումներ կատարելու ընթացքում չնչին առիթն օգտագործելով եւ հանդուգն վարքագիծ դրսեւորելով՝ խուլիգանական դրդումներով վիճաբանություն է հրահրել աշխատակիցների հետ, նրանց հասցեին հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ:

Ապա ավտոտեխսպասարկման կետի հարեւանությամբ գտնվող քաղաքացիների, թաղամասի բնակիչների, սպասարկման կետերի անդորրը խախտելով՝ իր մոտ ապօրինի կրած հրազենով կրակոց է արձակել 46-ամյա տղամարդու ուղղությամբ՝ վերջինիս պատճառելով մարմնական վնասվածք, եւ հեռացել է դեպքի վայրից: Հիշեցնենք՝Տիգրան Խաչատրյանին 2022 թվականի մայիսի 30-ին ձերբակալել էին՝ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի առաջին մասի հիմքով (Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը): Հուլիսի 30-ին նա ազատ էր արձակվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ

ՍՊԱՌՆՈՒՄ ԷՐ ՅԱԾ ՆԵՏՎԵԼ

Հուլիսի 5-ին հերթական անգամ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Երեւանի թիվ 7-րդ հրշեջ-փրկարարական ջոկատի հրշեջ-փրկարարները, ՓԾ փրկարար հոգեբանը, Ոստիկանության դարեկային ծառայության Երեւանի գնդի 2-րդ գումարտակի դարեկները, Ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողները, Երեւանի 1-03 շտաբօգնության բժիշկների հերթապահ խումբն ու արտագավ բաղաքացիները համատեղ ուժերով կանխել են արդեն «ավանդույթ» դարձած՝ Արարատի մարզի բնակիչ 42-ամյա Խաժակ Հայրապետյանի ինքնասպանության փորձը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամը 00:55-ի սահմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ մի քաղաքացի անցել է Կիեւյան կամրջի վտանգավոր եզրագիծն ու սպառնում է ցած նետվել:

Տեւական ժամանակ օպերատիվ ծառայություններն ու քաղաքացիները նրա հետ բանակցություններ վարելու արդյունքում կարողացել են համոզել նրան, եւ հերթական անգամ նա հրաժարվել է դիմել այդ ծայրահեղ քայլին:

Խ. Հայրապետյանը տեղափոխվել է Ոստիկանության Մաշտոցի բաժին:

⇦ *Լուսանկարը՝Կարեն Գրիգորյանի*

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝հուլիսի 3-ից 4-ը ՀՀ-ում նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 1 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ ԳՈՐԾԱԴՈՒԼ ԵՆ ԱՆՈՒՄ

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունն արդեն 15 օր դադարեցված է, շինարարները գործադուլի են դիմել, որովհետեւ արդեն երկրորդ ամիսն է, ինչ աշխատավարձ չեն ստանում: Դպրոցի շինարարությունը պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացնում է «Կանժինստրոյ» ընկերությունը: Դպրոցի շինարարությունում աշխատող բանվորները դժգոհեցին, որ իրենք անձրեւային եղանակին աշխատել են, իսկ հիմա, երբ արեւային եղանակ է, ստիպված դադարեցրել են աշխատանքը: Խնդրի մասին տեղյակ է նաեւ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը այս տարվա ապրիլի 29-ին Տավուշի մարզ կատարած այցի շրջանակներում այցելել է Դովեղի դպրոցի շինհրապարակ, բանվորներին հորդորել ետ չմնալ շինարարության ժամանակացույցից: Հեռախոսազրույց ունեցա դպրոցի շինարարության աշխղեկ, Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Սերյոժա Ամիրաղյանի հետ: Նա հայտնեց, որ նախկինում կատարված աշխատանքների համար, որոնք կատարվել են պահանջվող որակով, պետական բյուջեից ֆինանսավորում չի կատարվել: Մյուս խնդիրն այն է, որ դպրոցի շինարարության տարածքը ոչ թե 3-րդ կարգի փափուկ գրանտ է, այլ 5-րդ կարգի ժայտոտ գրունտ, որը քանդելու համար շինարարական տեխնիկա է աշխատել, մեծ ծավալի գործ է կատարվել, որի համար պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում: Դպրոցի շինարարները դպրոցի կառուցման մեջ օգտագործած շինանյութերի համար պարտքեր ունեն Նոյեմբերյան համայնքի շինանյութերի խանութներում:

938 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ՝ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ հուլիսի 3-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարզպետի աշխատակազմի համապատասխան ոլորտի աշխատակիցների ուղեկցությամբ ծանոթացել է Մ-16 միջպետական նշանակության ավտոճանապարհի Մայիսյան կամուրջ - Սարիգյուղ 7 կիլոմետր ճանապարահատվածի հիմնանորոգման աշխատանքների ընթացքին: Հիմնանորոգումն իրականացվում է «Սիսիանի ԲՈՒԱՏ» ճանապարհաշինական ընկերության կողմից՝ ՀՀ ՏԿԵՆ Ճանապարհային դեպարտամենտի պատվերով: Ճանապարհի հիմնանորոգման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 938 միլիոն դրամ: Հիշյալ ավտոճանապարհը ոչ վատ վիճակում է, այդ հատվածի նորոգման համար 938 միլիոն դրամը խիստ ուռճացած գումար է, այդտեղ կոռուպցիոն ռիսկեր կան: Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Սպիտակ-Վանաձոր հատվածը շատ փոսաոռատ է, այդ ճանապարհը շատ վատ վիճակում է, սակայն այն չեն հիմնանորոգվում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ԱՐՑԱԽԻՑ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համագումարին, որ այս տարի կայանալու է հուլիսի 6-8-ը, ներկա չեն լինի Արցախի բժիշկները շրջափակման պատճառով: Համագումարին արցախցի բժիշկները կմասնակցեն հեռավար:

Հուլիսի 5-ին կալացած մամուլի ասուլիսի ժամանակ համագումարի համանախագահ, ԱՄՆ-ում ապրող բժիշկ Գեւորգ Յաղջյանը նշեց, որ դեռեւս 2019-ին համագումարի համար առաջարկվել է ֆորմատ, որտեղ լինելու են երեք համանախագահներ՝ մեկը Հայաստանից, երկրորդը կներկայացներ Սփյուռքը, եւ երրորդը կհամակարգեր Արցախի մասը:

«Համագումարի նպատակն էր միավորել այս երեք մասերը: Հուլիսի 8-ը ամբողջությամբ նվիրված է լինելու Հայաստան-Արցախ-Սփյուռք համագործակցությանը: Ցավոք սրտի, չենք կարող բերել Արցախի բժիշկներին, սակայն համագումարը պատրաստ է նրան, որ բոլոր պլենար սեկցիաները, սիմպոզիումները հեռարձակեն Արցախում: Բժիշկները հավաքվելու են մեկ տեղում, հնարավորություն են ունենալու միանալ, հետեւել»,- ասաց նա:

Հարցին, թե արդյոք համագումարի մասնակիցների կողմից կլինի առաջարկ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով մեկնել Արցախ եւ այնտեղ կատարել վիրահատություններ, որի կարիքն ունեն շրջափակման մեջ գտնվող մեր հայրենակիցները, եւ արդյոք համագումարը այս առիթով հանդես կգա հայտարարությամբ՝ դիմելով աշխարհում իր գործընկերներին, բժիշկ Յաղջյանը պատասխանեց. «Ամեն ինչ պատրաստ է, քննարկված է, խոսել ենք դեսպանների հետ: Մենք հուլիսի 8-ին՝ համագումարի փակման ժամանակ, կոմյունիկեով հանդես կգանք, որը կուղարկվի բոլոր միջազգային կառույցներին, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, «ՅՈՒՆԻՍԵՖ» եւ այլն: Բոլոր բժիշկները, որ ներկա կլինեն դահլիճում, կստորագրեն:

Բացի այդ, հանդիպում ենք ունենալու ամսի 6-ին Արցախի ԱԳ նախարարի հետ: 15 հոգով ենք գնալու, ամեն երկրից վերցնելու ենք մեկ բժիշկ: Նախարարը կներկայացնի այսօրվա վիճակը, կներկայացնի, թե երբ բժիշկները վերադառնան իրենց երկրները, ինչպես ներկայացնեն իրավիճակը: Եթե կարողանանք տարբեր երկրների դեսպանատներին խնդրեինք, որ իրենց երկրների բժիշկներին հանդիպեն եւ նրանցից ստանան այդ կոմյունիկեն, դա հրաշալի կլինի: Պատկերացրե՛ք, Հարվարդի համալարանի պրոֆեսոր Ռոջեր Հաջարը հանդիպի իր դեսպանին եւ ասի այդ ամենի մասին: Սա կարեւոր բաղադրիչ է»:

Նա նաեւ հավելեց, որ առաջին անգամ որոշել են մրցանակներ տալ, որոնց շարքում լինելու է հումանիտար մրցանակ՝ Արցախի եւ դրա բնակիչների համար կատարված աշխատանքի համար. «Չենք ասում անունը, թե ով է ստանալու: Անունը պարզ կլինի համագումարի բացման ժամանակ»:

Իր հերթին համագումարի պատվավոր նախագահ, պրոֆեսոր Արա Բաբլոյանը նշեց, որ մենք լռելու իրավունք չունենք: Նա հիշեցրեց, որ երբ բետոնե պատնեշներով փակվեց Արցախի ճանապարհը, բժիշկների համայնքը հասավ նրան, որ դրա հաջորդ օրը ռուս խաղաղապահների ուղղաթիռով երեխա տեղափոխվեց Արցախից Հայաստան. «Երկու օր հետո Հայաստանից բժիշկը գնաց Արցախ: Սա նշանակում է, որ մենք պայքարում ենք բոլորի հետ հավասար՝ հանուն Արցախի»:

Հիշեցնենք, որ Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համագումարը կկայանա Երեւանում հուլիսի 6-8-ը:

Մեր տեղեկություններով՝ համագումարին ու դրա շրջանակում տեղի ունեցող 23 սատելիտային սիմպոզիումներին մասնակցելու են առողջապահական եւ բժշկական ոլորտի շուրջ 2000 ներկայացուցիչներ Հայաստանից եւ Սփյուռքից:

Համագումարի պլենար բանախոսների թվում են համաշխարհային հռչակ վայելող մասնագետներ Ջոն Բիլեզիկյանը, Վիկեն Բաբիկյանը, Ռոջեր Հաջարը, Նոռա Փաշայանը, Յակոպո Բաուսսանոն, Շարոն Չեքիջյանը, Շանթ Շեխերդիմյանը, Ուէյն Գրոդին, Բագրատ Ալեքյանը, Արմեն Հարությունյանը, Ավագ Գահվեջյանը եւ Ռուբեն Վարդանյանը: Արցախի բժիշկները համագումարին մասնակցելու են առցանց ձեւաչափով:

ՏՎՅԱԼՆԵՐ

ԱԽ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, որը պաշտոնը ստանձնել է 2020 թվականի պատերազմից հետո, հայտարարագրել է բնակարան, որը ձեռք է բերել 2020 թվականին կնոջ՝ Մանե Մինասյանի հետ համատեղ սեփականությամբ: Այն գտնվում է Երեւանի Արաբկիր վարչական շրջանում:

Գրիգորյանը հայտարարագրել է LEXUS մակնիշի մեքենա, որը ձեռք է բերվել 2019 թվականին: Անվտանգության խորհրդի քարտուղարի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 685 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցներ պատգամավորի հայտարարագրում առկա չեն, այնինչ նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 27 մլն 454 հազար դրամ, որից 21 մլն 909 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է վարչապետի աշխատակազմից: Նա 5 մլն 545 հազար 278 դրամ ստացել է Պետական եկամուտների կոմիտեից՝ որպես եկամտահարկ, ձեռք բերված բնակարանի հիփոտեքը մարելու համար:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 47 մլն 018 հազար դրամ: Գրիգորյանի՝ վարկերի մարմանն ուղված ծախսերը կազմել են 6 մլն 429 հազար դրամ:

Գրիգորյանի կինը, որը Հաշվեքննիչ պալատի նախագահի օգնականն է, հայտարարագրել է 434 հազար 290 դրամ բանկային հաշիվների մնացորդ եւ 2 մլն 058 հազար դրամ աշխատանքի վարձատրություն Հաշվեքննիչ պալատից: Գրիգորյանի կինը որեւէ ծախս չի նշել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԺԵՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԱՃԵԼ Է

Բժշկական նորմաներով հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն Արցախում առ ընթացիկ տարվա հունիսի 30-ը ընթացիկ գներով կազմել է 88 հազար 86 դրամ, իսկ պարենային զամբյուղի արժեքը՝ 49 հազար 766 դրամ: Այս մասին հայտնում են Արցախի ազգային վիճակագրական ծառայությունից՝ մանրամասնելով, որ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 15,4 տոկոսով, նախորդ ամսվա նկատմամբ՝ 6,9 տոկոսով:

● Հուլիսի 3-4-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 1 դեպք:

ՀՈՒՇԱԳԻՐ

ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆԸ ԿԱՋԱԿՑԵՆ ՆԱԵՎ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

Մեծ Բրիտանիա կատարած աշխատանքային այցի շրջանակում աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը հանդիպում է ունեցել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլերի տիկնոջ՝ Շերի Բլերի հետ, որը ղեկավարում է Կանանց հիմնադրամը: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է նախարարության տարածած հաղորդագրությունից, հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են կանանց եւ տղամարդկանց իրավունքների հավասարության, գենդերային քաղաքականության, կանանց տնտեսական զորեղացման ու վերջիններիս կայուն զբաղվածության ապահովման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայություններին առնչվող մի շարք հարցեր:

Նախարար Նարեկ Մկրտչյանը խոսել է կնոջ դերի բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումների եւ կանանց տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրերի մասին: Այս համատեքստում ներկայացրել է նախարարության եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հետ համատեղ ջանքերով իրականացված «Պլատֆորմ #5» հարթակի, Աքսելերատոր եւ Պրեաքսելերատոր ծրագրերի մանրամասներն ու արձանագրված արդյունքները. երեւանաբնակ ու մարզաբնակ կանանց հնարավորություն է տրվել դասընթացների միջոցով զարգացնել իրենց ձեռնարկատիրական հմտություններն ու իրագործել բիզնես գաղափարներ: Շուրջ 1400 կին մասնակցել է թվային մարքեթինգի դասընթացների եւ կատարելագործել իրենց հմտությունները:

Շերի Բլերն անդրադարձել է իր կողմից ղեկավարած հիմնադրամի գործունեությանը, իրականացված քարոզարշավներին, որոնց շրջանակում աշխարհի բազմաթիվ կանայք ստացել են ձեռներեցության եւ բիզնես գաղափարների իրագործման գիտելիքներ, զարգացրել իրենց կարողությունները: Հիմնադրամի շնորհիվ, 2008 թվականից սկսած, աշխարհի հարյուրից ավելի երկրում ձեռներեցությամբ է զբաղվել շուրջ 230000 կին: Նախատեսվում է մինչեւ 2030 թվականը եւս մեկ քարոզարշավի իրականացում՝ ներգրավելով շուրջ մեկ միլիոն կանանց:

Նախարար Մկրտչյանը պատրաստակամություն է հայտնել միանալ այդ նախաձեռնությանը եւ Հայաստանում եւս իրագործել այդ ծրագիրը՝ ընդգծելով կանանց տնտեսական զորեղացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման գործում համատեղ ջանքերի մեկտեղման անհրաժեշտությունը, որոնք կարող են առանցքային հարթակներ լինել վերջիններիս ինքնազարգացման ու ինքնադրսեւորման համար:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՆՈՐ ԿՈՅՈՒՂԻ ԵՎ ՀԵՂԵՂԱՏԱՐ՝ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Էրեբունու Մուշական թաղամասն ունի շուրջ 1600 բնակչություն: Այստեղ կոյուղի երբեւէ չի եղել: Տարիների ընթացքում բնակիչներից ամեն մեկն իր ձեւով է ժամանակավոր լուծում գտել: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է Երեւանի քաղաքապետարանից:

«Ավելի քան 40 տարի ապրում ենք այստեղ, բայց կոյուղի չունենք ու ստիպված հորեր էինք փորել, այդպես էինք օգտվում: Շատերը առվին էին միացնում: Տասնամյակներ շարունակ բարձրացրել ենք խնդիրը, բայց այդպես էլ չէր լուծվում»,-ասում են բնակիչները:

Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ Մուշականում այժմ կառուցվում է նոր կոյուղատար համակարգ: 4.6 կմ երկարությամբ ցանցը հնարավորություն կտա ամբողջությամբ լուծել թաղամասի ամենակարեւոր խնդիրը:

«Սկսում ենք մոտ 4600 մետր կոյուղագծի՝ ամբողջությամբ զրոյից կառուցումը: Տարածքը երբեւէ չի ունեցել կոյուղագիծ: Այս գիծը հասնելու է մինչեւ Աթոյան փողոց: Կառավարության ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերից է սա: Նպատակ ունենք հետագայում հարակից տարածքների կոյուղագծերը եւս զրոյից կառուցել եւ միացնել այս ցանցին: Քաղաքում հիմնովին նոր աշխատանքներ են իրականացվում», - նշում է Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետ Խորեն Գրիգորյանը:

Աշխատանքները նախատեսվում է ավարտել եւ ցանցը շահագործման հանձնել մինչեւ տարեվերջ: Ջուգահեռաբար բնակիչները կկարողանան ներքին միացումներն անել: Ծրագիրն էապես կբարձրացնի բնակիչների կյանքի որակը:

«Կոյուղագիծը սանիտարական հիգիենայի կարեւոր պայմաններից մեկն է: Մոտ 240 մլն դրամ արժողությամբ ծրագիրը հիմնովին է լուծում կոյուղագծի հարցը, եւ սա երկար պետք է ծառայի բնակիչներին: Մոտ 50-60 տարի կծառայեն»,-նշում է Խորեն Գրիգորյանը:

Երեւանում ընթանում է նաեւ կոյուղատար համակարգերի վերակառուցում: Խաղաղ Դոնի 23 հասցեն քաղաքի ամենամեծ շենքն է: Տարիներ շարունակ այստեղ կոյուղաջրերը լցվում էին նկուղներ, բնակիչների տներ: Այսօր արդեն տեխնիկան աշխատում է բակում:

«Խնդիրը բնակիչները բազմիցս բարձրաձայնել էին, նույնիսկ առաջին հարկի բնակարաններ էր լցվում: Այժմ հարցը լուծում է ստանում»,- նշում է Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Հակոբ Բալայանը:

2020-2022թթ. Երեւանում կառուցվել ու վերակառուցվել է 11 կմ կոյուղագիծ ու հեղեղատար համակարգ: Միայն այս տարի ծավալները շուրջ 14 կմ են:

«Այս տարի ծավալային առումով ամենամեծ ծրագրերն ենք իրականացնում: 26 հասցեներում 12 կմ երկարությամբ կոյուղատար համակարգ է վերակառուցվում: Ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով ցանցի վթարայնությունը, բնակչության պահանջարկը: Երկրորդ ծրագիրն իրականացնում է «Վիոլեա ջուր» ընկերությունը (1.4 կմ երկարությամբ, 10 հասցեներում)»,- ասում է Երեւանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Հատուկ հսկողություն է սահմանված աշխատանքների որակի նկատմամբ: Հնամաշ մետաղական խողովակները փոխարինվում են նոր ու հատուկ պոլիէթիլենային՝ ավելի շատ թողունակությամբ խողովակներով:

Երեւանի ներքաղաքային կուղատար համակարգի երկարությունը 1200կմ է, որի մոտ 80 տոկոսն այսօր փոխարինման կարիք ունի: Ցանցի արդիականացումը պահանջում է լուրջ ներդրումներ, իսկ համայնքային միջոցները բավարար չեն: Երեւանի քաղաքապետարանը գրանցել է ոլորտի առաջնահերթ եւ հեռանկարային խնդիրները, կազմել ծրագրային փաթեթ:

«Առաջիկայում քննարկում կունենանք, եւ հավանաբար ամփոփ առաջարկ կներակայացվի կառավարություն այս առնչությամբ»,- ասում է Արեյանը:

Երեւանի զարգացումը պետք է նպաստի նաեւ քաղաքացիների համար հարմարավետ միջավայրի ստեղծմանն ու պահովմանը: Փուլ առ փուլ համայնքը լուծում է մայրաքաղաքի՝ տարիներ շարունակ չլուծված խնդիրները:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ՝ ՆԱԽՔԱՆ ՍՈՒՋՎԵԼԸ

2018թ. հերթական ջրասուզման ընթացքում «Տիտանը» ենթարկվել էր կայծակի հարվածի. տեղեկացրել է Insider պորտալը՝ հղում կատարելով OceanGate Expeditions ընկերության ղեկավար Սթոկտոն Ռաշի հայտնաբերված հարցազրույցին:

Նշվել է, որ հարցազրույցը Ռաշը տվել էր վերջին սուզումից առաջ:

«Բարեբախտաբար, դա ուղիղ հարված չէր: Ուղիղ հարվածը, հավանաբար, մեզ լրիվ շարքից դուրս կբերեր: Ընդամենը մեկ-երկու օրում մենք կարողացանք փոխել այդ բոլոր բաղադրիչները»,- այն ժամանակ ասել էր Ռաշը:

Հարցազրույցում նա ասել էր, որ կայծակի հարվածի պատճառով վնասվել է սուզանավի բոլոր սարքավորումների 70 տոկոսը:

«Տիտան» սուզանավի հինգ ուղեւորներն իրենց կյանքի վերջին րոպեներն անցկացրել են՝ գրեթե լիակատար մթության մեջ երաժշտություն լսելով: Ստորջրյա արշավի մասնակիցներին առաջարկել են ներբեռնել իրենց սիրելի երաժշտությունը հեռախոսներում, որպեսզի այն վերարտադրվի Bluetooth դինամիկով:

ՆՈՐ ԳԱԼԱԿՏԻԿԱ՝ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ

James Webb տիեզերական աստղադիտակը հերթական ուշագրավ լուսանկարն է արել, որում երեւում է NGC 3256-ը՝ արտաքինից հանգիստ գալակտիկա, որը ձեւավորվել է 500 միլիոն տարի առաջ երկու այլ գալակտիկաների բախման արդյունքում. տեղեկացնում է Space.com-ը:

NGC 3256 գալակտիկան գտնվում է Երկրից մոտ 120 միլիոն լուսատարի հեռավորության վրա եւ պատկանում է Hydra-Centaurus սուպեր կլաստերին: Օբյեկտի բուռն անցյալի մասին են ակնարկում փոշու եւ աստղերի պայծառ, երկար թեւքերը, որոնք տարածվում են գալակտիկայի հիմնական զանգվածից:

Տիեզերական նման բախումների ուսումնասիրությունը գիտնականներին կարող է պատմել աճի մեխանիզմների մասին գալակտիկաների եւ դրանց միջուկներում գտնվող եւ Արեգակի միլիոնավոր եւ միլիարդավոր չափերի հասնող գերզանգվածային սեւ խոռոչների միաձուլման ժամանակ:

Միաձուլումը, որի արդյունքում ստեղծվել է NGC 3256-ը, առաջացրել է աստղերի ձեւավորման ինտենսիվ պայթյուն: Նման գործընթացներում արդեն ձեւավորված աստղերը հաճախ խուսափում են միմյանց հետ բախվելուց. դրանց միջեւ ընկած տարածությունն արդեն չափազանց մեծ է լինում:

Սակայն գազի եւ փոշու ամպերը միավորվում են ավելի խիտ կազմավորումների մեջ, եւ այստեղ սկսում են նոր աստղեր ծնվել: Այս գործընթացում արտադրվում է ինտենսիվ ինֆրակարմիր լուսավորում, իսկ James Webb-ը, որը նախատեսված է հենց այս տիրույթում աշխատելու համար, պարզվում է՝ ամենահարմար գործիքն է նման իրադարձությունները դիտարկելու համար:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱՐԱՋԱՆՈՎԻ 100-ԱՄՅԱԿԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Հայազգի կինոբեմադրիչ, սցենարիստ եւ արվեստագետ Մերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ իրականացվող հայ-ֆրանսիական նախագծի շրջանակում ֆրանսիական մի շարք թատրոններում կներկայացվի «Նռան գույնը» պարային բեմադրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս մասին հայտնեց նախագծի հեղինակ եւ դրամատուրգիական կոնցեպտի հեղինակ Սաթէ Խաչատրյանը: Ներկայացման առաջնախաղը կկայանա 2024 թվականի հունվարի 18-ին, 19-ին Դեսինի «Տոբոգան» թատրոնում, հունվարի 26-ին՝ Մոն դը Մարսանի «Գասկոն» թատրոնում: Այն կցուցադրվի նաեւ Երեւանում:

Խաչատրյանը նշեց՝ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հայ-ֆրանսիական պարային ներկայացման վրա սկսել են աշխատել 2021 թվականին: Նա ընդգծեց՝ փորձել են ներգրավել եւ՛ հայ, եւ՛ ֆրանսիացի մասնագետների:

«Ինձ համար՝ իբրեւ հայի եւ իբրեւ արվեստագետի, շատ կարեւոր էր, որ Փարաջանովի ստեղծագործությունը ներկայացվի այլ դիտանկյունից, հետեւաբար խորեոգրաֆը Մուրադ Մերզուկին է: Պարողներից 5-ը ֆրանսիայից են, 2-ը՝ Երեւանից: Թիմին միացել է «Հող» խումբը, որին վստահված է պարային ներկայացման երաժշտական ստեղծագործությունը, եւ Էդգար Մանուկյանը, որը լինելու է ներկայացման հագուստների ձեւավորման հեղինակը»,- ասաց Խաչատրյանը:

Նախագծի երկրորդ ստեղծագործական փուլը կկայանա հոկտեմբերի 23-ից նոյեմբերի 4-ը Ֆրանսիայի Բրոն քաղաքի «Պոլ-Պիկ» մշակութային կենտրոնում հայ եւ ֆրանսիացի արտիստների մասնակցությամբ:

Նախագծի երրորդ եւ վերջին ստեղծագործական փուլը կկայանա 2024 թվականի հունվարի 8-18-ը ֆրանսիական Դեսին քաղաքի «Տոբոգան» թատրոնում դարձյալ հայ եւ ֆրանսիացի արտիստների մասնակցությամբ:

«Ներկայացումն ունի եւ՛ ՀՀ-ի, եւ՛ Ֆրանսիայի աջակցությունը, որը խոսում է Ֆրանսիայում հայկական մշակույթը բարձր գնահատելու, կարեւորելու եւ հայերին արժեւորելու մասին: Սա փաստում է, որ Ֆրանսիան՝ մեր բարեկամ երկիրը, մեր կողքին է ոչ միայն դժվարին պահերին, այլեւ մեր մշակույթը հանրահռչակելու, մեզ իր հարգանքը մատուցելու հարցում»,- ասաց Սաթէ Խաչատրյանը:

Ներկայացման խորեոգրաֆ Մուրադ Մերզուկին նշեց՝ իր համար մեծ մարտահրավեր է խոշոր արվեստագետին ճիշտ ներկայացնելը:

«Պարը համընդհանուր, համամարդկային լեզու ունի, եւ ես հույս ունեմ, որ այս ներկայացումը հնարավորություն կտա այս խոշոր արվեստագետի ստեղծագործությունը ներկայացնել ամբողջ աշխարհին հասկանալի լեզվով: Բնականաբար, սա ներկայացում է, որը ներշնչված կլինի իրենից, որոշ պարերով կտեսնեք հենց իր ձեռագիրը, եւ ես մեծ հույս ունեմ, որ այս ներկայացումից հետո հանդիսատեսը ցանկություն կունենա ճանաչելու կամ, ովքեր ճանաչում են, ավելի լավ բացահայտելու Փարաջանովին եւ նրա ստեղծագործությունները»,- նշեց Մերզուկին:

«Նռան գույնը» պարային բեմադրությունն իրականացնում են ֆրանսիական «Սաթէ-Աթոը» թատերական միությունը, «Պոլ ան Սցեն» կազմակերպությունը, «Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը եւ «Արտ-Իմաժ» մշակութային ՀԿ-ն: Նախագծին աջակցում են Հայաստանի ԿԳՄՍ նախարարությունը, Հայաստանում ֆրանսիական ինստիտուտը եւ Ֆրանսիայի դեսպանատունը, Դեսինի «Տոբոգան» եւ Մոն դը Մարսանի «Գասկոն» թատրոնները: Նախագծին աջակցում են նաեւ Երեւանի քաղաքապետարանը եւ Լիոնի Մետրոպոլը:

ՍՊԱՍՈՒՄ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԸ ՉԻ ՓԱԿՎԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մշակել էր մի նախագիծ, ըստ որի՝ «Գոյ» թատրոնի վարչական հատվածը պետք է կրճատվեր, իսկ թատրոնի ստեղծագործական կազմը՝ «Գոյ» թատերախումբ անունով, գործունեություն ծավալեր Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տանիքի ներքո:

Թատրոնի անձնակազմն ի սկզբանե դեմ էր նախագծին՝ համարելով, որ նման կերպ միտում կա դադարեցնել թատրոնի գործունեությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ նախարարությունը նախագիծը ներկայացրել էր ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության՝ մայիսի 11-ին անցկացված նիստում որոշում էր կայացվել «Գոյ» թատրոնը միացնել Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին:

«Թատրոնի անդամներով հայց ներկայացրինք դատարան, որը մերժվեց: Հիմա հայցը դատարանում է: Երեկ այս գործով վարույթ է ընդունվել, որովհետեւ այն պատճառները, որ բերվում են, մտացածին են, արհեստական են»,-շեշտեց թատրոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Սահակյանը:

«Գոյ» թատրոնի ներկայացուցիչ, փաստաբան Կարո Ասատրյանի խոսքով՝ ամիսներ շարունակ որոշ գործընթաց է սկսվել «Գոյ» թատրոնի դեմ, ինչի պատճառով թատրոնը դատական պաշտպանության փուլում է: «Այս պահին իրավական առումով կա իրավիճակ, որ «Գոյ» թատրոնը չի փակվում: Իմ ներքին համոզմամբ՝ այն չի փակվելու առհասարակ, բայց փաստ է, որ այն չի փակվի մինչեւ հիմնական դատական ակտի կայացումը: Ըստ էության, մենք ունենք նորմատիվ իրավական ակտ՝ կառավարության կողմից ընդունված, որը ձեւական առումով է նորմատիվ իրավական ակտ: Որպեսզի պարզ լինի, ասեմ՝ սրանք այն որոշումներն են, որոնք անորոշ թվով մարդկանց համար իրավունքներ, պարտականություններ, նորմեր են առաջացնում»,-նշեց փաստաբանը:

Նա հավելեց՝ կա որոշում, որում սահմանված են որոշակի գործողություններ, մասնավորապես՝ գործընթաց, որը հանգեցնելու է «Գոյ» թատրոնի այլեւս գոյություն չունենալուն, բայց, քանի որ որոշումը թատրոնի կողմից վիճարկվում է, եւ վիճարկում են, որ նման որոշումն ընդունվել է օրենքի խախտումներով, ուստի դրան պետք է գնահատական տա դատարանը:

«Դատարանը վարույթ է ընդունել, այսինքն՝ խնդիր կա, եւ պետք է քննվի, թե ով է ճիշտ, ով է սխալ: Քանի որ Վարչական դատարանը բավականին ծանրաբեռնված է, չգիտենք, թե վարույթ ընդունված որոշման վերաբերյալ դատական առաջին նիստը երբ կլինի: Չեմ բացառում, որ նիստը տեղի ունենա, օրինակ, վեց ամիս հետո»,- նշեց Կարո Ասատրյանը:

Թատրոնը շարունակում է աշխատել: Հուլիսը հագեցած կլինի ներկայացումներով. հուլիսի 6-ին թատրոնում առաջնախաղ է սպասվում: Բեմ կբարձրանա Եղիշե Չարենցի ստեղծագործությունների հիման վրա բեմադրված «Քեֆս լավ ա» պոետիկ ներկայացումը, կցուցադրվեն նաեւ «Լոնդոն Blues», «Դեպի վերջ», «Հավերժի ճամփորդը», «Իրական առասպել» ներկայացումները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՌԱՋԱՐԿ՝ ԹՈՒՐՔ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻՆ

Մադրիդի «Ռեալը» պաշտոնական առաջարկ է արել Ստամբուլի «Ֆեներբահչեին» 18-ամյա հարձակվող Արդա Գյուլերի տրանսֆերի վերաբերյալ: Արքայական ակումբը պատրաստ է Թուրքիայի հավաքականի խաղացողի համար վճարել 20 միլիոն եվրո. հաղորդում է twitter.com/fabrizioromano-ն: «Ռեալն» արդեն համաձայնության է հասել ֆուտբոլիստի հետ եւ սպասում է «Ֆեներբահչեի» պատասխանին: Թուրքական ակումբի առաջին թիմում Արդա Գյուլերը մասնակցել է 51 հանդիպման, խփել 9 գոլ, կատարել 12 գոլային փոխանցում: Նրա պայմանագիրը «Ֆեներբահչեի» հետ նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս: Transfermarkt-ը Արդա Գյուլերի տրանսֆերային արժեքը գնահատում է 15 միլիոն եվրո:

ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ

Մադրիդի «Ռեալի» իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին Բրազիլիայի հավաքականը կգլխավորի 2024թ. հունիսին՝ Ամերիկայի գավաթի խաղարկությունից առաջ: Այդ մասին հայտնել է Բրազիլիայի ֆուտբոլային ֆեդերացիայի նախագահ Էդնալդո Ռոդրիգեսը հավաքականի ժամանակավոր գլխավոր մարզիչ Ֆերնանդո Դինիզի շնորհանդեսի ժամանակ:

«Դինիզի աշխատանքը նորարարական է: Նա իր փիլիսոփայությամբ շատ ակումբներում է աշխատել: Ես շատ եմ հավանում նրա խաղաոճը, մարտավարական մշակումները: Ամերիկայի գավաթի խաղարկությունում թիմը կղեկավարի Անչելոտին, որի ոճը նման է Դինիզի ոճին: Անչելոտիի պայմանագիրը նախատեսված կլինի մինչեւ 2026թ. աշխարհի առաջնության ավարտը»,- Էդնալդոյի խոսքը մեջբերում է Globo-ն:

Դինիզը կնքել է մեկ տարվա պայմանագիր: Մարզչական կարիերայի ընթացքում նա գլխավորել է «Ֆլումինենսեն», «Սան Պաուլուն», «Սանտոսը», «Վասկո դա Գաման»:

ՆԵՅՄԱՐԸ ՏՈՒԳԱՆՎԵԼ Է

CNN-ը հայտնում է, որ ֆուտբոլիստ Նեյմարը տուգանվել է 3,33 միլիոն դոլարով Բրազիլիայի հարավ-արեւելքում իր առափնյա առանձնատան կառուցման ժամանակ բնապահպանական կանոնները խախտելու համար: Ծքեղ նախագիծը խախտել է քաղցրահամ ջրի աղբյուրների, քարերի եւ ավազի օգտագործման եւ շարժման կանոնները: Նեյմարի խոսնակը հրաժարվել է մեկնաբանել այս հարցը: Mangaratiba-ի բնապահպանական մարմինը երկուշաբթի օրը հայտարարություն է տարածել, որ բնապահպանական խախտումներ են կատարվել «առանձնատանը արհեստական լճի կառուցման ժամանակ»: Բացի տուգանքից, գործը հետաքննվելու է տեղական գլխավոր դատախազության, պետական քաղաքացիական ոստիկանության եւ շրջակա միջավայրի պահպանության գրասենյակի կողմից՝ ի թիվս այլ բնապահպանական վերահսկողության մարմինների:

ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

● *Հուլիսի 7-ին Բոհեմ թատրոնում տեղի կունենա «Անտանիք ընտանիք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԱԱԾ-ում ինչպե՞ս է կատարվում տեղեկատվություն ստանալու կարգը:

Մարիամ Մնացականյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում տեղեկության տրամադրումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության՝ 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1204-Ն որոշմամբ սահմանված կարգով: Միաժամանակ, համաձայն վերոհիշյալ որոշման՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության պաշտոնական կայքի «ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄ» բաժնում գործում է պաշտոնական էլեկտրոնային հարցումներ ուղարկելու հնարավորություն: Հարցումները պետք է ունենան «Էլեկտրոնային փաստաթղթի եւ էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով սահմանված էլեկտրոնային թվային ստորագրություն:

Ազգային անվտանգության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանավոր հարցումների ընթացակարգը սահմանվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1. պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը,
2. անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը,
3. անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ծանոթանալ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը:

Ոսկան Հովհաննիսյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը կարող եք ծանոթանալ կայքի «Օրենսդրություն» բաժնից՝ այցելելով «Կանոնադրություն» ենթաբաժինը:

ՀՀ պետական վերահսկողության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը կարող եք նաեւ ներբեռնել եւ տպել www.supervision.am կայքից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Օրերս ուժեղ քամուց մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում կենսունակության ավարտին մոտ թեդի տեսակի ծառեր եւ բարդիներ են տապալվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+ 9 + 14 +24 + 29
Կոտայքի լեռներ	+ 9 +14 +24 + 28
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +30 + 32
Գեղարքունիք	+11 + 15 +22 + 26
Լոռի	+ 9 + 14 +23 + 27
Տավուշ	+12 + 16 +26 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 +23 + 26
Արագածոտնի նախալեռներ	+16 + 19 + 23 + 26
Արարատ	+18 + 21 +35 + 37
Արմավիր	+15 + 18 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 +23 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+17 + 20 +32 + 35
Սյունիքի նախալեռներ	+11 + 13 +24 + 28
ԼՂՀ	+17 + 21 +31 + 34
Երեւան	+ 18 + 20 +34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*